


ԲԱՆ Ա.Ս Ի ԹԱԿ ԱՆՔ

ԱՅՆԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



Պոմպէա և Հերքուլանոն քաղաքներուն աւերակները նոյն հրաշալի ազդեցութիւնը կ'ընեն Ճանապարհորդաց վըրայ՝ ինչ օր իրենց կանգուն կեցած ժամանակը Հռովմայեցւոց աշխարհակալութեանը ատեն։ Պատմութիւնը կ'աւանդէ թէ երկուքն ալ անուանի քաղաքներ էին։ և իրենց հիմնարկութիւնը ինչուան էին յունական գաղթականութեանց ժամանակը կը չանէ։ Աական տիսուր գէսկը մը, որուն նման՝ սուրբ գիրք Առողմայ և Կամարի վրայ կ'աւանդեն, այս երկու քաղաքն ալ անհետ ըրաւ աշխարհէս։ Այս սոսկալի գէտքին պատմութիւնը՝ զոր համառօտ մը

ուրիշ տեղ յիշեր ենք՝ մանրամասն հոս դնենք։

Խտալիոյ հնագոյն քաղաքաց մէկն է Հերքուլանոն, Վեապոլաց թագաւորութեանը մէջ։ և Վրիստոսէ 1250 տարի առաջ՝ ի պատիւ Հերակլեսի և կամ իրմէ շինուած։ Իրեն մօտ, և Աառնոս գետին ափունքը կ'իյնայ նաև Պոմպէա քաղաքը։ Երկուքն ալ պատմութեանց մէջ նշանաւոր քաղաքներ, և որոնց հետզհետէ տիրեցին Ասեացիք, Տիւրենացիք, Պելասգեանք և Աամնիացիք։

Վրիստոսի 63 թուականին՝ փետրուար ամսուն մէջ չերքուլանոնի բնակիչը մեծ գետնաշարժ մը՝ և անոր հետևանք զանազան վնասներ ունեցան : Ասկայն վախիերնին անցնելէն ետքը մէկէն ձեռք զարկին այլեւայլ նորանոր շէնքերով եղած վնասուցը առջեն առնելու : Ի՞ն դէպքէն ինչուան տամնը վեց տարի ետքը՝ միայն քանի մը թեթև ցնցումներ զգացին բնակիչը . սակայն Վրիստոսի 79 թուականին՝ օգոստոս ամսոյն քսանուիններորդ օրը Ա եսուլի խառնարաննէն թանձր մուխ մը և մոխիր սկսաւ ելլէլ . և բաւական բարձրանալէն ետքը տարածուելով՝ այլ և այլ գոյներ առաւ , ու յանակնկալս շրջակայ քաղաքաց վրայ թափուեցաւ :

Խեղձ բնակիչը գետնաշարժէն ահաբեկելով , և մահառիթ օդոյ մը մէջ չկարենալով ապրիլ , ուզեցին փախըստեամբ կեանքերնին խալըսել : Ասկայն ջերմ մոխիրը խղճեց զիրենք , ու ապա կանիչ կրակը վրայ հասնելով՝ շինուածոց աւերակներուն տակ՝ բոլոր քաղաքացիը ծածկեց :

Ի՞ն ատեն պատահեցաւ Երիցուն Պլինիոսի մահը : Ի՞ս անակնուննելի դէպքին ստորագրութիւնը կ'ընէ կըրտսերն Պլինիոս՝ իր առ Տակիտոս գրած թղթին մէջ . որ ուզելով Երիցուն Պլինիոսի մահուանը պատմութիր ստուգութք աւանդել , հանգամանքը անոր քեռորդիկն ուզեր էր : . . . “ Որեղբայրս Ա իսենէի նաւահանգիստն էր , կ'ըսէ . և նաւատորմղին անձամբ հրամանատարութիւն կ'ընէր : “ Եղեմբերի առջի օրը ժամը 7 մայրս իմացուց իրեն թէ անսովոր մեծութեամբ և ձեռվ ամալ մը երկեցեր էր : “ Եղն միջոցին Պլինիոս ցուրտ ջրով լուացուելէն ետքը՝ նախաձաշը ըրած անկողնոյն մէջ առանձնացեր և ուսման կը պարապէր . բայց երբոր այս բանս լսեց , մէկէն վեր ցատքեց այն հրաշալի երկոյթը տեսնելու համար : Իմպ մը , որուն ուսկից գալը առաջ չէր զիտցուեր , ու ետքը իմացուեցաւ թէ Ա եսուլին է , Ճիշդ գիհի ծառուինանութեամբ դէպ ՚ի վեր կ'ելլէր .

վասն զի ուղղաբերձ բարձրանալէն ետքը՝ Ճիւղերու նման կը տարածուէր . և ինծի կ'երեայ թէ յանկարծակի հողմով մը վեր ելլէլէն վերջը՝ կամ հողմոյն փոփոխութեամբը և կամ ինքիր ծանրութեամբը օդուն մէջ կը տարածուէր , մերթ լուսաւոր գոյն մը առնըլով և մերթ ընդհակառակն մթին և խաւարին : Դաղեցիկ տեսարան մըն էր ասիկայ , և իրեն պէս գիտուն մարդու մը մասնաւոր մտադրութեանը արժանաւոր : Հրամայեց որ շուտով թեթև նաւակ մը պատրաստուի իրեն համար , և ինծի ալ թոյլ տուաւ որ եթէ ուզեմ՝ հետը մէկտեղ երթամ : Իայց եսուսումը նախամեծար սեպելով յանձնշառի . մանաւանդ որ գաղափարելու համար գրուածք մը տուեր էր ինծի՝ զոր հարկ էր լրացընել : Ծնէն գուրս ելլելու ատեն՝ Իեսիոս Ռասսոսի կինը Հռետինա տոմնակ մը հասուց ձեռքը . ասիկայ վերահաս վտանգէն տագնապած՝ մօրեղբօրս կ'աղալէր որ զինքը այնպիսի թշուառութենէ մը խալըսէ . վասն զի իր կեցած ամարաստունը վըտանգի մէջ էր , ու միայն ջրով կրնար խալըսելու ձարը տեսնել : Պլինիոս այս տոմնակը առնելուն պէս մէկէն միտքը փոխեց . և զոր առաջ ուսմանը համար սկսեր էր , վառուեցաւ շուտով մը լմընցընելու : Վառաթի նաւակ մը հանել հրամայեց . ու մէջը ցատքելով՝ չէ թէ միայն Հռետինայի՝ այլ նաև բիւրաւորաց ալ օգնութեան վազեց : Ա օտեցաւ հոն՝ ուսկից այլք կը փախչէին . և այն պիսի ահաւոր վտանգի մը մէջ զարմանալի քաջարաբութեամբ զեակը կ'ուզելէր , և հարկաւոր հրամանները կուտար : Որչափ մօտենար՝ այնչափ աւելի տաք մոխիրը և կրակ դարձած քարերը նաւուն վրայ կ'իրնային . և լերանը պատառուածքէն ձեւացած աւերակները թող չէին տար որ կարենայ ծովեղբքը մօտենալ : Ա աւավարներէն մէկը խրատ տուաւ իրեն որ ետ դառնայ . ինքն ալ գրեթէ համոզուելու վրայ էր . բայց մէկէն միտքը փոխեց , ու այն խորհուրդը իրեն տուող նաւավարին

դառնալով . “ Ռազդը , ըսաւ , կ’օգ-
նէ յանդգաց . հապա առ Պոմպոնիա-
նոս երթանք , : Պոմպոնիանոս՝ Ատա-
բիա կոչուած հին բերդին մէջ էր , ծո-
վուն դէպ ’ի միւս կողմը կառուցած :
Հօն թէպէտ վտանգը վերահաս չէր ,
Պոմպոնիանոս վախնալով որ ըլլայ թէ
կենացը հետ ունեցածը չունեցածը կոր-
սընցընէ , ամէն բանը նաւու մը վրայ
բեռցուցեր էր , որպէս զի հսղմնյն դա-
դրելէն ետքը ինքվինքը փրկէ : Ի՞յն մի-
ջոցին վրայ հասաւ մօրեղբայրս , դողի
մէջ եղող բարեկամը գրկեց . սիրտ տը-
ւաւ ու քաջալերեց . և անոր յուզմուն-
քը իր հանդարտութեամբը մեղմելու
համար՝ ուզեց բաղնիք մտնել . լուա-
ցուելէն ետքը ուրախութեամբ ձաշեց ,
կամ զէթ ուրախ երես ցըցուց :

“ Իայց Ա եսուվէն ելած մուխը կը
թանձրանար և հուրը կը յաձախէր .
և անոր պայծառութեամբը և լուսով՝
գիշերուան մութը կը փարատէր : Ա օր-
եղբայրս ուրիշներուն սրտէն վախը հե-
ռացընելու համար կ’ըսէր թէ կրակը
անապատներու մէջ և անբնակ տե-
ղուանք տարածուեր է . և ինքը պառ-
կելով՝ քուն եղաւ . . . Ա ըմբնալէն
ետքը զՊոմպոնիանոս և ուրիշները զըտ-
նելու գնաց , որոնք վախերնէն և ոչ ա-
չուընին կրցեր էին գոցել : Խորհուրդ
ըրին իրարու հետ , արդեօք տան մէջ
կենան , թէ գուրս բացօթեայ տեղ մը
ելլէն . որովհետեւ յաձախ և երկար
ցնցունքներէ տունը կը շարժէր , և
հիմունքէն դողալով՝ կործանման վախ
կուտար : Դաւրս ապ ելլելու սիրտ չէին
ըներ . ինկած քարերէն զգուշանալով :
Խրկու վտանգաց մեծութիւնը իրարու
հետ բաղդատելով՝ հարկ սեպեցին տը-
նէն ելլէլ . ուստի գլուխնին բարձեր
դրած՝ թաշկինակներով կապկրակեցին ,
որպէս զի բարձրէն ընկած քարինքը
վնաս մը չընեն իրենց : Աւրիշ տեղեր ար-
դէն լսու էր . իսկ հօն գիշեր և քան զա-
մենայն գիշերս գիշեր մութ . թէպէտեւ
անդադար բոցեր և լսու կ’երեային :
Ա օրեղբայրս ուզեց ծովեզերը իշնել՝
մօտէն տեսնելու համար թէ արդեօք

կրնայ նորէն նաւակ նստիլ , բայց ծովը
դեռ խռովիւալ էր , և հակառակ քամին
չէր դադրած : Հօն խեղճ սաւանի մը
վրայ նստելով երկու անգամ ջուր ու-
զեց և խմեց . բայց բոցը , և անոր կա-
րապետ՝ ծծմբային հոտ մը ստիպեց
զուրիշները որ փախչին . Պլինիոս ալ
սկսաւ նեղուիլու նորէն գետին ընկաւ .
երկու ծառայք բռնելով վերուցին զին-
քը , ու նոյն միջոցին մեռաւ , :

Պլինիոս կրտսերն երկրորդ թղթով
մ’առ Տակիտոս նոյն ահաւոր գիշե-
րուան տեսարաններուն մանր հանգա-
մանքը կը ստորագրէ :

“ Ա օրեղբայրս հեռանալէն ետքը՝
մնացած ժամանակը ուսման զբաղելով
անցուցի , որովհետեւ այն վախճանով ալ
տուն մնացեր էի . ետքը բաղնիք գնա-
ցի , ընթրեցի , ու քիչ և անհանգիստ
քուն մը ունեցայ : Կ ատ օր առաջ եր-
կրաշարժի ցնցում իմացեր էինք , բայց
առանց մնասու մը . որովհետեւ Խամպա-
նիոյ մէջ սովորական է այս դէպքս . սաւ
կայն այն գիշերը անանկ սաստիացաւ որ
կարծես թէ ամէն բան կը ցնցէր :
Ա այրս խուցս վազեց , մինչդեռ ես պա-
տրաստուեր էի զինքը արթընցընելու
եթէ քնոյ մէջ ըլլար : Տանը վայրա-
գաւթին մէջ նստացանք՝ որն որ քիչ մը
ծովէն հեռու էր : Ա եմ գիտեր թէ այս
գործս քաջարտութիւն թէ անխոչե-
մութիւն անուանեմ . վասն զի դեռ հա-
զիւ տասնութը տարուան էի այն ատե-
նը : Տիտոս Լ իւիսոս մը ուզեցի , ու կար-
դալով՝ մէջի կարեւոր բաները կը քա-
զէի : Ա եմ’ալ վրայ հասաւ մօրեղ-
բայրս բարեկամ հիւր մը որ Ապա-
նիայէն նոր եկեր էր . ու տեսնելով որ
մայրս և ես նստեր կը կարդանք , զար-
մացաւ ու անխոչեմութիւն սեպեց մեր
ըրածը . սակայն ես աչքս գլքին վրայէն
չվերուցի : Ա ըշալցուը ծագելէն ’ի վեր
ժամ մը անցեր էր . բայց օրուան լցուը
դեռ անստոյգ ու թալկացած կ’երեար .
չորս կողմերնիս եղած տները փլեկլ
սկսեր էին , և մեզի համար ալ մեծ վախ
կար աւերակներու տակը մնալու :

“ Ա երջապէս հարկաւոր սեպեցինք

քաղաքէն ելել : Ետենէս կուգար ահաբեկած ժողովուրդը . վասն զի վախի ատեն խոչեմութիւն սեպուած է ու ըիշներուն կարծեաց տեղիք տալը : Իշնակուած տեղուանքէն գուրս ելելով՝ կանկ առինք : Հօն այլեայլ տեսարաններ ու այլեայլ վտանգք առջւնիս ելան : Ա ասն զի մեզմէ ետքը եկող կառքերը թէպէտե տափարակ գետնի վըրայ՝ բայց գէս ՚ի ետ ետ կը քշուէին . և անկարելի կ'ըլլար քարեր դնելով առջւնին՝ մի և նոյն կէտին վրայ բռնել զաննք : Իաց ասկէ՝ գետնաշարժին աղդեցութիւնը ծովուն վրայ ալ կ'երեար , և կարծես թէ ջրերը իրարու վրայ մղուելով կ'ամփոփուէին . անով ծովեկելքը երկընցած կ'երեար , և շատ ձկունք ցամաքի վրայ կը մնային : Ո՞իւս կողմէն սե և ահաւոր ամպ մը՝ կրակ դարձած հողմոյ բռնութեամք կոտր կոտր եղած , հրոյ այլեայլ գծեր կ'երեցընէր . ասոնք փայլատականց կը նմանէին , և առաւել էին քան զփայլատակունս : Ի՞յն ատեն՝ Ապանիայէն եկող բարեկամը մեզի դառնալով , աւելի ուժով մը հետերնիս խօսեցաւ . “ Ո՞ւէ որ , ըստու , քու եղբայրդ՝ և քու քեռիդ կ'ապրի , կ'ուզէ որ դուք ալ ազատ ըլլաք . իսկ եթէ մեռաւ , կը փափաքի որ դուք երկարակեաց ըլլաք քան զինքը . ապա ուրեմն ինչու կը դանդաղիք , և ազատման հնարքը չէք մտածեր ” : Ապատասխան տուինք իրեն . “ Արտերնիս չգիմանար որ անոր ազատութեանը վրայ անատոյգ՝ մենք զմեզ հոգանք , ” : Խնքը ալ մեզի չնայեցաւ . ու վազելով ինքզինքը վտանգէն խալզաեց : Ի՞յն ատեն թանձրագութեանը ծովը ծածկեց : Այրս այս բանս տեսնելով սկսաւ սիրտ տալ ինձի , աղացել ու հրաման տալ որպէս զի փախչիմ . և թէ ես երիտասարդ ըլլալով կընայի ազատիլ , մինչդեռ իրեն համար անկարելի էր տարիքին շատութեանը և մարմնոյն դանդաղութեան պատճառաւ . “ Ա կայն ուրախութեամք կը մեռնիմ , կ'ըսէր , միայն թէ քու մահուանդ պատճառ ճառ ըլլամ , ” : Ամացուցի իրեն թէ զին

քը և զիս միամսգամայն կ'ուզեմ ազատել . ու ձեռքէն բռնելով ստիպեցի որ քայլերը շուտոցընէ . իւղձը ետևէս կուգար և կը գանգատէր որ իմուշանալուս առիթ կ'ըլլայ իր յամբաքայլ ընթացքով : Արդէն երկնքէն սկսեր էր մոխիր թափթթվիլ . բայց ոչ այնչափ իրտութեամբ : Ետես դառնալով տեսայոր բազմութիւն մարդկան ետենէս կուգային և թանձր մառախուզի մը պէս բոլոր երկիրը գրաւեր էին : “ Դամ բանիս փոխենք , ըսի մօրս . ըլլայ որ այս բազմութեանս մէջ ոտնակոխ ըլլանք ” :

“ Հազիւ թէ նստեր էինք՝ գիշերը վրայ հասաւ . չէ թէ միայն ամպոտ և անլուսին գիշեր մը , այլ ինչպէս գոյտեղի մը մէջ՝ ուր ձրագունքը անցած ըլլան : Հօն կը լսուէր կանանց ձիը , տղայոց ողբը , արանց աղաղակը . ումանք ձայնով զիրար կը փնտուէին , և ձայնով կ'ուզեին ձանչնալ իրենց հայրը , որդիքը և ամուսինքը . մէկը իր գլուխը հասած թշուառութեան վրայ կ'արտասուէր , միւս մ'ալ իրեններուն աղետիցը . այլք ալ մահուընէ վախնալով զանիկայ կը փնտուէին : Ը ատերը աստուածոց աղօթք կ'ընէին , մինչդեռ ևս բազմագոյնք անոնց գոյութիւնը կը մերժէին , և այն գիշերը աշխարհիս վերջ կը համարէին : Եղան ումանք ալ որ երեակայեալ և սուտ վախերով՝ իրաւացի վտանգաց մեծութիւնը կը շատցընէին : . . . Վիշ մը պայծառութիւն տեսնուեցաւ , որն որ չէ թէ միայն կէս օր չէր , այլ մերձաւոր կրակի մը հնոց կը թուէր . հրոյն լցուը անցաւ , ու նորէն մութ մը տիրեց , և թանձր մսխիր մը սկսաւ տեղալ վրանիս . . . Ա երջապէս մուխը փարատեցաւ , և լցուը երենալով տեսանք որ ալ գէն արեւը ծագած է եղեր . բայց գոյնը կորսընցուցած արեւ մըն էր , ինչպէս խաւարման ատեն կը նկատենք . աշուրնուս ամենայն ինչ փոխուած կ'երեար , և մսխիրի լեռ մը ամէն բան ծածկեր էր : “ Ո՞իսենէ դառնալով յուսոյ և երկիր զի մէջ տագնապալից գիշեր մը անցու-

ցինք : Ասկայն վախը աւելի էր . վասն զի դեռ երկրաշարժը կը շարունակէր . ոմանք ալ իրենց ձախորդ կանխաձայ . նութեամբը նորանոր աղէտք կը գուշաւ կէին : Խակ մենք թէ պէտ վասնգէն աւ զատած էինք , սակայն սիրտ չէինք ըներ անկէց հեռանալու՝ ինչուան որ մօրեղ- քօրս վրայ նոր լուր մը չանունք : Ո՞չ , իրաւունք ունէինք վախնալու իրեն կե- նացը վրայ ։ :

կը շարունակոի :

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի բուրգերուն օգտակարութեամբ վրայ նոր կարծիք մը :

Իմն աստեն իմաստնոց մէջ վէճեր ելեր են թէ արդեօք Եգիպտացիք ինչ վախնանի և ինչ օգտի յուսով շնչած ըլլան իրենց բուրգերը՝ անհամար ծախ քով և անբաւ աշխատութեամբ :

Տեսակ տեսակ կարծիքներուն վրայ , մօտերս նոր կարծիք մ' ալ կ'աւելցընէ Պելշիոյ Ճարտարութեան թանգարա- նի վերատեսուչը Պ. Շառպար⁹ . իր հրա- տարակած կարծիքը մեր հնասիրաց ալ կ'ուզենք հաղորդել :

Եգիպտացիք , կ'ըսէ Շառպար , որ ըստ ամենայն հոչակաւոր Ճանապարհորդաց հնութեան ամենէն աւելի խելացի և լուսաւորեալ ժողովուրդը կը սեպուին , չէին ձեռք զարներ այսպիսի վիթխարի ձեռագործաց՝ առանց հասարակաց այն պիսի մեծ օգուտ մը դիտելու , որուն համար յանձն առնուն այնպիսի մեծ գումար ծախելու :

Ինոր համար անտարակոյս բուրգերը Վեղոսին ծաւալած ատեն մէջի պտը- տող բիւրաւոր նաւավարներուն , և ա- ւազուտ անապատին մէջ թափառական Ճանապարհորդներուն համար գտողա- կան կէտեր էին որոնք տասնըհինգքասն փարսախ հեռուէն կրնային լուսաւոր

¹ Եգիպտոսի բուրգերն ու պատկերը տես Օ- րագրիս Դ. հատորին մէջ էջ 315 :

² La Science pour tous. N. 2.

ընկուզի պէս տեսնուիլ , որուն նմանու- թենէն Յոյնք զրուրգերը կուեր են ու- րծ ամսցալաւ (կրակէ նուշ) , որ ետ- քէն կրծատութեամբ եղեր է ուրամիւ :

Վէտոփիթ բրդան գլխուն դաշտաձւին վրան կրնար կարի կրակ վառուիլ , ու պահապան զօրքեր ալ կրնային կենալ հեռուէն տեսնուող կարաւանաց հաս- նիլը և թշնամի աշխարհակալաց յար- ձակումը դիտելու և իմացընելու հա- մար : Ի՞այց նաւավարաց ուղղութեան դրին համար մէկ բուրդ մը միայն բա- ւական չըլլալով՝ Վէտոփինէն ետև եր- կրորդ մը ալ շինեցին , յետոյ երրորդ մըն ալ . և շատ մը պղտիկներ ալ , ինչ- պէս թշնամեաց դէմ պատերազմողք կը շինեն պղտի պղտի մարտկոցներ :

Ուրեմն քաղաքականացեալ ժողո- վըրդեան մը ամենամեծ կարևորութե- համար շինուած էին աս բուրգերը :

Ի՞յն ամենայն ազգեր որ ընդարձակ շիտակ երկիրներու մէջ բնակած են , ինչպէս Եգիպտաց դաշտավայրները , վարուն ճամբաներ բացուած չըլլալուն՝ բարձր աշտարակներ կանգնելու կարօ- տութիւն ունէին , ցրուած զօրաց հա- մագումար ժողվուելու և դիտելու վախ- չանաւ :

Շաբեկոնի անուանի աշտարակը նոյն վախճանաւ շինուած էր , ինչ վախճա- նաւ որ Եգիպտոսի բրդերը և Ծինու- յախճապակէ աշտարակը : Ձեն ալ նոյն եղած պիտի ըլլայ , ինչպէս որ մինչեւ հիմա մնացած քառակուսի չորս յարկերէն կ'երեւայ , որուն աւերակաց վրայ ձիով ելեր է Պլքինկէմ Ճանա- պարհորդը :

Ա ինչենցիոս Կասսոս (Օզաձ¹) Ամազոնաց գետին քովի եղած դաշտա- վայրաց մէջ գտաւ շատ մը Եգիպտո- սիններուն նման բուրգեր , որ անշուշտ նոյնպէս հասարակաց փրկութեան պի- տոյիցը համար կանգներ էին երկրին Եգիպտան ըսուած նախնի ժողովուր-

¹ Միացեալ նահանգաց Օզաձ գետին եղերը Արիանուս ու Միսուրի գաւառները բնակող հըն- դիկ երկրցիքը Օզաձ կ'ըսուին , որ հիմա սկսած են կրթուիլ :